

Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների, բողոքների 2016թ.-ի

ինն ամիսների ամփոփագիր

2016թ-ի ինն ամիսների ընթացքում ստացվել է 1302 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 1083 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 1050-ը, մերժվել՝ 23-ը, ընթացքի մեջ է 10 դիմում: /Դրամական օգնության դիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 11 քաղաքացի, որից 8-ի խնդրանքը բավարարվել է, 2-ինը՝ մերժվել, 1 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 113 դիմումից դրական պատասխան է ստացել 107-ը, մերժվել է՝ 4-ը, 2 դիմում ընթացքի մեջ է: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով/:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 24 քաղաքացիներից 13-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 7 դիմում մերժվել է, 4 դիմում ընթացքի մեջ է /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմած 11 քաղաքացիներից 8-ը ստացել են դրական պատասխան, 2-ը մերժվել, 1 դիմում ընթացքի մեջ է:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել են 17 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմած 11 քաղաքացիներից 9-ը ստացել են դրական պատասխան, 2 դիմում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել են 25 քաղաքացի և ստացել են դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 7 դիմում է հաշվառման վերցված, որին տրվել է դրական պատասխան:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

**Փ. Ղազարյան՝ մարզպետարանի աշխատակազմի  
քարտուղարության ընդհանուր բաժնի պետ**